ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ/ՎԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	«Սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում»
ԴՊՐՈՑ	Խնձորուտի միջնակարգ դպրոց
ՈՒՍՈՒՑԻՉ	Ծովինար Սաղաթելյան
ՂԵԿԱՎԱՐ	Կիմա Օհանեսյան

Վայք 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

§ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ: ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՆՁԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆ ***5***

1.1 Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը *9*

§ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ *12*

§ 3. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ *18*

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 19

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 20

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու կարողություններից կարևորագույն բաղադրիչներից մեկը համարվում է ինքնուրույնությունը: Մանկավարժության և հոգեբանության մեջ գոյություն ունեն ինքնուրույնության տարբեր մեկնաբանություններ: Ինքնուրույնությունը որպես անհատականության կայուն մաս ապահովում է հաջողության բարձր մակարդակ և պլանների գործնական իրագործելիություն և ցանկացած գործունեության մեջ կարևոր նախաձեռնություն:

Այսպես ինքնուրույնությունը բազմաչափ անհատական կրթություն է, որը ձևավորվում է կարիքների մեջ և դրսևորվում է սովորողի գործունեության մեջ: Օրինակ, Լ.Վ.Ժարովան արդարացիորեն կարծում է, որ անկախությունը արդյունք է կրթության և ինքնակրթության. դա ամենակարևոր պայմանն է անհատական և ստեղծագործական ունակությունների ինքնաիրացման համար: Այս ամենի հնարավոր տարբերակներից մեկը մանկավարժի ուղեկցությունն ու աջակցությունն է: Այսինքն՝«շփման» համագործակցությունից մինչև «հեռավոր» անկախություն, մի տեսակ ձև ոչ ֆորմալ կրթության:

Ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակություն ունի տարրական դասարաններում: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարման կարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել ինքնուրույն աշխատել: Եթե երեխաները դեռևս փոքր տարիքից սկսած սովորում են ինքնուրույն աշխատել, ապա այդ կարողությունը դառնում է նրանց սեփականությունն ամբողջ կյանքի ընթացքում:

Թեմայի արդիականությունը: Գիտելիքներ և հմտություններ ունեցող սովորողները միշտ ձգտում են անկախ լինել: Դա անելու համար նրանց հաճախ անհրաժեշտ է մոտիվացիոն կարգավորում, որը շարժման մեջ է դնում գիտելիքներն ու հմտությունները, հուշում է գործողությունների առանց օգնության: Ժամանակակից մանկավարժական գիտության և պրակտիկայի առանցքը ազատ, քննադատաբար

մտածող, ստեղծագործ անհատականություն դաստիարակելու խնդիրն է: Այդ իսկ պատճառով ստեղծագործական կարողությունների զարգացման խնդիրը բավականին երկար ժամանակ արդիական է մնացել: Ստեղծագործական կարողությունների կառուցվածքը հասկանալը անհրաժեշտ գիտելիք է ժամանակակից ուսուցչի համար, ով ձգտում է լուծել ժամանակակից ուսումնական հաստա-տություններում ստեղծագործական կարողությունների զարգացման վերաբերյալ աշխատանքի կազմակերպման խնդիրը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել սովորողների մեջ ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում:

Խնդիրներն են՝

- Բացահայտել սովորողների ինքնուրույնությունն ու նախաձեռնողականությունը իբրև անձի ձևավորման խթան:
- Պարզել սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը:
- Պարզաբանել սովորողների ինքուրույնության և նախաձեռնողականության զարգացման մեթոդները:

§ 1. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ: ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆՆ ԻԲՐԵՎ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽԹԱՆ

Տարրական դասարանում ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ: Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ այն համապատասխանի յուրաքանչյուր սովորողի կարողություններին, այսինքն՝ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները պետք է լինեն տարբերակված, որի համար անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները՝ հիշողության, մտածողության, նախապատրաստվածության մակարդակը և այլն [6]:

Ուսուցիչները հաճախ կիրառում են սովորողների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են սովորողներին ինքնուրույն աշխատել, բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ:

«Ինքնուրույնություն» և «ինքնուրույն աշխատանք» արտահայտություններում կա տարբերություն: Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև [6]:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց[1]: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը: Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը: Գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները զարգանում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:

Ինքնուրույնության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության՝ հետևաբար, նաև հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը: Սակայն, նման որակը դատարկ տեղում չի ձևավորվում. հանրակրթական համակարգից պահանջվում է մշակել ինքնուրույնության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն

ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում սովորողի ազատության սահմանները պիտի ավելի ընդարձակվեն: Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության պրոցեսում: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս, երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի: Եթե երեխան շատ թե քիչ խելացի է՝ կարող է լավ կատարել հանձնարարություններ, իսկ ահա ստեղծագործաբար աշխատել, խնդիր դնել, ծրագիր ու պլան կազմել և ինքնուրույն իրականացնել դրանք՝ ի վիճակի չէ. Նա չունի ինքն իր հանդեպ այդ վստահությունը: Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ ամեն մի հետաքրքրություն: Չկա հետաքրքրություն՝ չկա կայուն ուսումնական մոտիվացիա, որը հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու գլխավոր երաշխիքն է [6]:

Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:

Ստեղծարարությունը բնորոշ է յուրաքանչյուրին, նրանք ձևավորվում և զարգանում են գործունեության մեջ: Ստեղծագործական գործունեության արդյունքում ստացված արտադրանքը կրում է անհատական գծերի դրոշմը: Ստեղծագործական ունակությունները բաղկացած են հոգեբանական և անձնական տարրերից, ինչը հանգեցնում է գործունեության հաջող կատարմանը կամ սուբյեկտիվ /օբյեկտիվ նորի առաջացմանը: Գիտնականներն առանձնացնում են անկախության երեք փոխկապակցված հիմնական բաղկացուցիչ մաս՝ հմտություն, շարժառիթ, կամք:

Մանկավարժները հաճախ առարկում են, թե երեխան հասունացած չէ ինքնուրույնության համար և իրեն նվիրած ազատությունը կարող է չարաշահել՝

մատնվել անգործության: Այստեղ ճշմարտության մի աննշան բաժին կա: Բայց դպրոցի խնդիրն էլ հենց օգնելն է սովորողին՝ գիտակցել ազատության ու պատասխանատվության դիալեկտիկան: Անառարկելի ճշմարտություն է, որ ազատությունը սովորում են գնահատել ազատ ապրելու պայմաններում, մտածել, պրոբլեմներ հաղթահարել սովորում են դրանք լուծելով, ինքնուրույնության սովորում են նման գործունեություն իրականացնելով, ի վերջո՝ մտածել սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով:

Մտածողության ինքնուրույնությանը բնորոշ են հետևյալ կարողությունները.

- Առանձնացնել գլխավորը, տեսնել ընդհանուր օրինաչափությունը և կատարել ընդհանրացնող եզրահանգումներ,
- հետևողական, տրամաբանորեն հիմնավորել իր գործողությունները և վերահսկել դրանք,
- գիտելիքները կիրառել անծանոթ պայմաններում՝ հաճախակի բարդացնելով՝ ստեղծագործաբար, ոչ ստանդարտ մոտեցմամբ,
- ստանալ արդյունքները՝ առանց օգնության դիմելու[6]:

Ընդհանուր առմամբ, տարբերակվում են սովորողների ինքնուրույնության չորս մակարդակ.

I. Պարզ վերարտադրողական ինքնուրույնություն: Այս մակարդակի ինքնուրույն գործունեությունը հատկապես վառ դրսևորվում է վարժությունների կատարման ընթացքում, որոնք պահանջում են գիտելիքների պարզ վերարտադրություն, երբ սովորողները, իմանալով կանոնները, ձեռքի տակ ունենալով պատրաստի նմուշը, ինքնուրույն լուծում են առաջադրանքները: Եթե առաջադրանքը փոքր-ինչ չի համապատասխանում տրված նմուշին, ապա սովորողը կդժվարանա լուծել այն: Ընդ որում, նա հաճախակի հրաժարվում է կատարել առաջադրանքն այն պատճառաբանությամբ, որ այդպիսի առաջադրանքներ դեռևս չի կատարել:

II. Ընտրովի ինքնուրույնություն: Այս մակարդակում ինքնուրույնությունը դրսևորվում է այսպես. Սովորողը մի շարք կանոններից, դատողությունների

օրինակներից, սահմանումներից և այլն կարողանում է ընտրել մեկը և կիրառել այն նոր առաջադրանքների ինքնուրույն կատարման գործընթացում: Սովորողները կիրառում են մտավոր գործողություններ կատարելու կարողություններ՝ համեմատություն, վերլուծություն, համադրություն և այլն: Վերլուծելով առաջադրանքի պահանջները՝ սովորողն ընտրում է արդեն ձեռքբերած գիտելիքներից, կարողություններից այն կարևորը, որն անհրաժեշտ է տվյալ առաջադրանքի կատարման համար:

III. Մասնակի-որոնողական ինքնուրույնություն: Այս մակարդակում սովորողն առաջադրանքների կատարման ընթացքում կիրառում է առավել ընդհանրական կարողություններ, որոնք ձեռք է բերել այլ առարկաների և այլ թեմաների ուսուցման ընթացքում: Նա կարողանում է կատարել ինքնավերահսկում և ինքնագնահատում, կարողանում է ինքնուրույն պլանավորել և կազմակերպել իր ինքնուրույն գործունեությունը: Սակայն այս մակարդակում դեռևս սովորողը չի դրսևորում ստեղծագործական մոտեցում:

IV. Ստեղծագործական-հետազոտական գործունեություն ծավալելու մակարդակն է: Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ այն համապատասխանի յուրաքանչյուր սովորողի կարողություններին, այսինքն՝ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները պետք է լինեն տարբերակված: Ուսուցիչը պետք է իր համար հստակեցնի տարբերակված ինքնուրույն աշխատանքի նպատակը՝ ապահովել յուրաքանչյուր սովորողի կատարած աշխատանքի առավել բարձր արդյունավետությունը: Դրա համար անհրաժեշտ կլինի հաշվի առնել յուրաքանչյուր սովորողի անհատական առանձնահատկությունները՝ հիշողության, մտածողության, նախապատրաստվածության մակարդակը և այլն [4]:

1.1 Սովորողների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը

Փորձը ցույց է տալիս, որ՝

- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքի պարբերաբար անցկացումը սովորողներին առավել խորը և ճկուն գիտելիքներ է տալիս, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:
- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության՝ տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:
- Ժամանակի ընթացքում, դասերի ընթացքում ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման, և տրված առարկայից տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարար կարողությունները [4]:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք, որը ներառում է 7 հիմնական փուլ՝

1. *Կազմակերպչական.* սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:
2. *Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը* կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման

համար: Բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում:

3. *Նախապատրաստական.* այս փուլում ուսուցիչը սովորեցնում է, կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել համադասարանցիներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել.., այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:
4. *Կողմնորոշիչ.* ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում է առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի այդ, ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը, որը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն: Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:
5. *Հիմնական փուլ.* կատարվում է ինքնուրույն աշխատանքը:
6. *Ամփոփիչ փուլ.* այս փուլում կատարվում է անցուդարձ: Ուսուցիչը գնահատում, քննարկում և վերլուծում է ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:
7. Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝ *ստուգիչ փուլ*, որի ընթացքում սովորողը կատարելով առաջադրանքը՝ ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն, այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում [4]:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

- Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի ո՞ր փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,
- ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում [1]:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում: Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը, դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները: Միայն այս դեպքում ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ, հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

§ 2. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ: ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԻՆՔՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ուսուցչի առջև խնդիր է դրված աշակերտների մեջ զարգացնել մի շարք որակներ, ինչպիսիք են

- ☒ ինքնակազմակերպում,
- ☒ ինքնատիրապետում,
- ☒ անկախություն,
- ☒ նախաձեռնողականություն,
- ☒ պլանավորման հմտություններ,
- ☒ կրթական ու ճանաչողական գործունեության իրականացում:

Առանց նպատակներին հասնելու անհնար է պատշաճ կազմակերպված ինքնուրույն աշխատանք: Այս առումով մեծ ուշադրություն է դարձվում անկախ մտածողության ձևավորմանը [6]:

Կոմպետենցիաների կամ կարողունակությունների մասին գիտելիք ունենալու միջոցով ուսուցիչը բազմակողմանի ուսումնասիրում է աշակերտին, ստեղծում համապատասխան միջավայր՝ նրա կողմից նյութն ավելի դյուրին յուրացնելու համար: Խաղային գործունեության ստեղծման միջոցով աշակերտների մոտ ձևավորվում է ինքնուրույնություն, քանի որ նա ինքնուրույն է իր խաղատախտակի առջև: Այս նույն հատկանիշը ձևավորում է նաև արժեքային համակարգ և դիրքորոշում տվյալ գործունեության նկատմամբ: Այս ամենը չի կարող աշակերտի մոտ զարգացնել դրական հատկանիշներ, եթե աշակերտն իր մեջ չունենա ստեղծագործական գործունեություն ծավալելու մոտիվացիա [5]: «Հետազոտությունները բացահայտել են, որ սովորողների ներքին մոտիվացիան աճում է, երբ նրանք հնարավորություն են ունենում ընտրելու և պատասխանատվություն են կրում իրենց ուսումնառության համար» [7]:

«Ինքնուրույնության խթանման համար անհրաժեշտ է կարևորել համապատասխան մոտեցումներն ու սպասումները ինչպես տարիքային տարբեր փուլերում, այնպես էլ կրթական տարբեր աստիճաններում: Մանկության տարիներին ազատ և դերային խաղերի առաջադրմամբ երեխային կարելի է ուղղորդել, հետևել նրա

ընտրության սկզբնական քայլերին, սովորեցնել պատասխանատվություն կրել սեփական ընտրության համար» [6]: Դպրոցական տարիքում պարտադիր է պահել ցանկացած աշխատանքում խաղային տարրեր, որպեսզի, երեխան կարողանա իր նախկին գործունեության հետ ունեցած կապը պահպանել:

Դասավանդման ամենաազդեցիկ մասերից մեկն է ձևավորող գնահատումը, արդյունավետ հետադարձ կապի հետ մեկտեղ, և երբ այն լավ է արվում, այն կարող է նը-պաստել զգալի բարելավմանը: Ձևավորող գնահատումը ուսուցիչներին թույլ է տալիս հասկանալ, թե «որտեղ» է սովորողը ներկայումս, որպեսզի ուսուցիչը կարողանա

- ✓ հարմարեցնել ապագա ուսուցումը՝ ավելի լավ բավարարելու ուսուցման կարիքները,
- ✓ դիտարկել նրանց աջակցությունը տարբերակելու հնարավորությունը և գ) արդյունավետ հետադարձ կապ ապահովել սովորողների համար և նրանց միջև: Ինչպես նաև ուսուցիչներին տրամադրելով շարունակական պատկերացում, թե որ փուլերում են գտնվում իրենց սովորողները, ձևավորող գնահատումը նաև արդյու-նավետ է թույլ տալով աշակերտներին զարգացնել իրենց մետաճանաչողական հըմ-տությունները, ինքնուրույն ձևավորել ինքնուրույն ուսուցման համար [8]:

Երբ դուք գնահատում եք, թե ինչն է սովորողն ավելի լավ անում և ինչ պետք է անեն: Հետադարձ կապը կարող է լինել ուսուցիչից, այլ սովորողներից և ինքնակարգավորվող սովորողներից: Երբ ուսանողները ստանում են արդյունավետ արձագանքներ, դա նրանց օգնում է հասկանալ, թե որտեղ են նրանք գտնվում նպատակի կամ արդյունքի առումով, որտեղ պետք է լինեն և ինչպես փակել այդ երկուսի միջև եղած բացը: Արդյունավետ հետադարձ կապը, հետևաբար, կենտրոնացած է սովորելու վրա:

Որպեսզի հետադարձ կապն արդյունավետ լինի և բարելավի ուսումը, այն պետք է օգնի սվորողներին որոշել, թե ուսումնական որ նպատակներն են իրատեսական և իրագործելի: Կարևոր է, որ ուսուցիչներն ակտիվորեն ձգտեն սովորողներին տրամադրել հետադարձ կապ, որն ապահովում է անհրաժեշտ

տեղեկատվությունը՝ հետագա քայլերի համար: Այս բնույթի հետադարձ կապն օգնում է հեշտացնել սովորողի մոտիվացիայի անցումը արտաքին, կատարողականի վրա հիմնված համակարգից, որտեղ պարգևներ են տրվում (հիմնված ֆիքսված կարողությունների և մյուսների հետ համեմատության վրա), դեպի ներքին ուսումնառությանն ուղղված համակարգ՝ հիմնված ջանքերի և սովորողների վրա հավատալ իրենց սովորելու ունակությանը: Սովորողներին նաև խրախուսվում է ավելի մեծ պատասխանատվություն ստանձնել իրենց ուսման համար, քանի որ նրանք ավելի լավ են հասկանում, թե ինչ պետք է անեն: Իրոք, սա է պատճառը, որ հետադարձ կապը ուսուցման համար գնահատման կենսական կողմն է:

Գրավոր և/կամ բանավոր հետադարձ կապ տրամադրեք դասի և տնային աշխատանքների վերաբերյալ. սա կարող է լավ միջոց լինել սովորողների՝ ինքնուրույն աշխատելու վստահությունը բարձրացնելու համար: Սահմանափակեք ձեռքբերման գնահատականների և միավորների օգտագործումը և մտածեք գնահատականներ տալ ջանքերի մակարդակի համար:

Ձևավորող գնահատումն օգնում է ուսուցչին ընթացիկ արդյունքների հիման վրա նախանշել իր և սովորողների քայլերը: Ուսուցչի քայլերի ճշգրտումը և զարգացնող առաջադրանքների կիրառումը օգնում են բարելավել սովորողների ձեռքբերումները: Այսպես, դասի յուրաքանչյուր փուլում ուսուցիչը ժամանակ առ ժամանակ հարցերի, դիտարկումների միջոցով պետք է ստուգի, թե արդյոք սովորողները չեն շեղվել նախատեսված նպատակներին տանող ուղուց:

Ստորև ներկայացված են մի քանի հնարներ, որոնք կօգնեն սովորողներին և ուսուցիչներին՝ ձեռքբերումները, դժվարությունները ու բացթողումները բացահայտելու, անհրաժեշտ ճշգրտումներ անելու, առաջադրանքները հնարավորինս հասկանալի դարձնելու և անսխալ կատարելու համար: Այս հնարները լավ միջոց են նաև սովորողների ինքնուրույն աշխատանքը խթանելու, ինչպես նաև կազմակերպելու ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

«Ջերմաչափում» մեթոդը նպատակ ունի բացահայտելու, թե սովորողները որքանով են ճիշտ կատարում հանձնարարությունը: Աշխատանք կատարելու ընթացքում մի պահ դադար է տրվում. ուսուցիչը հարցնում է. «Ի՞նչի վրա էիք

աշխատում»: Յուրաքանչյուր սովորող ներկայացնում է այն աշխատանքը, ինչը ինքը մինչ այդ պահը կատարել է: Պարզ էդառնում, թե սովորողները որքանով են հասկացել հանձնարարությունը կամ դրա կատարման ընթացքը: Զույգերով կամ խմբերով աշխատելու պարագայում ուսուցիչը դիմում է որևէ զույգի կամ խմբի՝ ասելով, որ ցուցադրեն իրենց աշխատանքի ընթացքը: Մյուս զույգերը կամ խմբերը դիտում են և հասկանում, թե իրենցից ինչ է պահանջվում կատարել:Այս մեթոդը շատ կարևոր է, քանի որ փորձը ցույց է տվել, որ սովորողների մեծ մասը առաջադրանքը կատարելիս դժվարություններ է ունենում ոչ թե այն պատճառով, որ թեման չգիտի, այլ չի հասկանում առաջադրանքի պահանջը, ուսուցչի հրահանգը կամ կատարման ընթացքը: Խորհուրդ է տրվում հաճախակի կիրառել այս հնարը, որը ժամանակատար չէ և նպաստում է աշխատանքի արդյունավետության բարձրացմանը:

«Ադամանդների հիերարխիան» մեթոդը կարող է իրականացվել անհատական, զույգով կամ խմբով: Սովորողները քարտի կամ կպչուն թղթերի վրա մշակում կամ նախապես գրի են առնում տվյալ դասի թեմայի շուրջ 9 գաղափար: Սովորողները քարտերը դասավորում են վերևից ներքև ըստ կարևորության՝ հետևյալ սկզբունքով. 1-ին տողում ընտրում և փակցնում են 1 քարտ, 2-րդ տողում փակցնում են 2 քարտ, 3-րդ տողում՝ 3 քարտ, 4-րդ տողում՝ 2 քարտ և 5-րդ տողում՝ 1 քարտ: Քարտերը ստանում են ադամանդի տեսք և դասավորվում ըստ գաղափարների առաջնահերթության:



Դասավանդման մեթոդը, ներառում է ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու աշակերտների ուսուցման գործընթացը: Այս ռազմավարությունները կախված են մասամբ թեմայի բովանդակությունից և մասամբ սովորողի բնույթից: Որպեսզի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ՝ այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ: Մեթոդների ընտրության առաջարկները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս ոչ միայն պետք է հաշվի առնել առարկայի բնույթը, այլ նաև թե ինչպես են սովորում աշակերտները: Այսօրվա դպրոցի նորարարական միտումներից մեկն այն է, որ այն խրախուսում է ստեղծագործ միտքը:

Նախագծային մեթոդը ուսուցման միջոց է, որը 18-րդ դարում ներդրվել է Եվրոպայում ճարտարապետության և ճարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեին իրենց ուսման ընթացքում սովորած հմտություններն ու գիտելիքները, երբ պետք է լուծեին օրինակ, հուշարձանի նախագծման խնդիրներ: Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ նորույթ չէ: Այն կիրառվել է ավելի վաղ, քան ամերիկյան ուսուցիչ Ուիլյամ Հերդ Կիլպատրիկի «Ծրագրի մեթոդ» (1918) հայտնի հոդվածի հրապարակում, որտեղ նա այդ հայեցակարգը սահմանեց որպես «սրտից կատարված ծրագիր»: Նախագծերը կարող են լինել անհատական և խմբային, տեղական և հեռահաղորդակցական: Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել Համացանցում՝ գտնվելով տարբեր տարածաշրջաններում: Ընդ որում, ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը:

Այսպիսի ուսումնական նախագծի նպատակն այն է, որ պետք է բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և արդյունքի ստացման ողջ ընթացքը: Ցանկացած նախագծի հիմնական նպատակն է տարբեր կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

Կրթության մեջ անհատական մոտեցումը առաջացրեց նոր մեթոդի պահանջ, որի արդյունքում առաջ եկավ նախագծային ուսուցումը որպես նոր մեթոդ: նախագծային աշխատանքի հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները՝

1. Ձևավորել ակտիվ, ինքնուրույն և կրթական գործում ակտիվ մասնակցություն 14 ունեցող սովորողներ համայնք:
2. Զարգացնել հետազոտական, ստեղծագործական, որոնողական հմտություն:
3. Ձևավորել ինքնագնահատականը:
4. Ձևավորել ոչ միայն գիտելիքներ, այլ՝ այնպիսի հմտություններ, որոնք սովորողները կկարողանան կիրառել իրենց պրակտիկ գործունեության մեջ:

5. Զարգացնել սովորողի ճանաչողական հմտությունները։
6. Ապահովել կյանք-կրթություն իրական կապը։

Նախագծային մեթոդը հենց կրթական մեթոդների ամբողջությունն է, որոնք հնարավորություն են տալիս սովորողներին ձեռք բերել գիտելիքներ և կարողություններ՝ կոնկրետ հանձնարարություններ պլանավորելու և ինքնուրույն իրականացնելու կամար։ Արդյունքը՝ տեսանելի, ներկայանալի, հրապարակված աշխատանքն է։ Նախագծային աշխատանքը պետք է ունենա սկզբունքներ, որոնք կկոնկրետացնեն հետագա աշխատանքը։ Այդ սկզբունքներից են՝

- ✓ գրավիչ հետաքրքիր լինելը սովորողի համար,
- ✓ սովորողի պետք է տեսնի որ կարող է դառնալ բացահայտող,
- ✓ պետք է մղեն որոնելու, գտնելու, համեմատելու, հակադրելու, զուգահեռներ անցկացնելու,
- ✓ դրդեն մտածելու, ստեղծելու, գտնելու, նորը բացահայտելու։

Այսպիսով նախագծային աշխատանք կրթական այն գործիքն է, որը գիտելիքը դարձնում է փորձ, հմտություն։ Եվ որքան հաճախ և արդյուավետ կիրառեք այնքան հաջողված կրթական ոլորտ կձևավորենք, ուստի երեխայի մոտ կզարգանա մտքի ճկունությունը, կամքի ուժը, նպատակասլացությունը, վճռականությունը, ինքնուրույն որոշումներ կայացնելու և պատասխանատվություն կրելու դրանց համար։ Սովորողներն աչքի են կընկնեն համարձակ ստեղծագործելու ունակությամբ, վերլուծելու կարողությամբ, ճկուն տրամաբանությամբ և, բացի այդ, կկարողանան բարդ իրավիճակներում արագ կողմնորոշվել։

§ 3. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՍ

Հետազոտությունը կատարել եմ 4-րդ դասարանում, որտեղ սովորում են 10 աշակերտ՝ 4 աղջիկ, 6 տղա: Որպես հետազոտության թեմա ընտրեցի «Осень в Армении» թեման: Աշակերտների ինքնուրույնությունը բացահայտելու համար օգտագործեցի մի քանի մեթոդներ:

Ստեղծագործ միտքը զարգացնելու հանար և ինքնուրույնության բացահայտման համար յուրաքանչյուր աշակերտի հանձնարարեցի 4-5 նախադասությամբ ներկայացնել թեման: Օգտագործեցի քարտեր, որոնք զարգացնում են ինքնուրույն գրելու հմտությունները:

1-ին օրվա արդյունքների վերլուծություն՝ հանձնարարված աշխատանքը ամբողջությամբ կատարեց 4 աշակերտ:

2-րդ օրվա արդյունքների վերլուծություն՝ հանձնարարված աշխատանքը կատարեց 3 աշակերտ: Հետազոտության ընթացքում կատարել եմ տեքստային աշխատանքների վերլուծություն, յուրաքանչյուր աշակերտի հանձնարարեցի թարգմանել որևէ նախադասություն: Այն աշակերտերը որոնք ինքնավստահ էին և ինքնուրույն կատարեցին աշխատանքն: Դժվարացան բառապաշարի պակաս ունեցող աշակերտներն:

Հիմնավորում: Հետազոտության նպատակը աշակերտի համար դարձավ ինքնուրույն աշխատելու ձևավորման նախապայմաններից մեկն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքի շրջանակներում առաջադրված նպատակի և խնդիրների ուսումնսիրության արդյունքում եկանք հետևյալ եզրահանգումներին՝

- աշակերտների շրջանում ինքնուրույնություն, նախաձեռնողականություն և ստեղծագործական ունակություններ զարգացնելն, էլ ավելի արդիական դարձնելու համար, հարկավոր է ժամանակակից մոտեցումները հաշվի առնելով, զարգացնել նաև աշակերտների արժեքային համակարգը, ձևավորել դրական տրամադրվածություն առարկայի և ուսման նկատմամբ:
- Հարկավոր է մեծ ուշադրություն դարձնել աշակերտների ինչպես ներքին, այնպես էլ արտաաքին մոտիվացիային /շահադրդմանը/, քանի որ դա նույնպես կարող է հանգեցնել դրական արդյունքի՝ ճիշտ ուղղորդում կատարելու դեպքում:
- սովորողների ինքուրույնության և նախաձեռնողականության զարգացման համար, ուսուցիչը պետք է նորարական մեթոդներ և հնարներ կիրառի՝ կազմակերպելով բազմաբնույթ աշխատանքներ:

Ամփոփելով վերը նշվածը կարող ենք ասել, որ անհատի դաստիարակությունը բարդ և կարևոր խնդիր է:

Ստեղծագործականությունը երեխայի զարգացման ամենահզոր ազդակն է: Պոտենցիալ հանճարը ապրում է յուրաքանչյուր մարդու մեջ, և ուսուցչի խնդիրն է զարգացնել ստեղծագործական ուժերը փոքրիկ մարդու մեջ: Միևնույն ժամանակ ստեղծագործական մթնոլորտը պահանջում է ազատություն և վստահության զգացում, որպեսզի ստեղծագործական դրսևորումները նկատվեն, ընդունվեն և ըստ արժանվույնս գնահատվեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս II, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ. 136 էջ:
2. Կ. Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխչյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2011թ. 272 էջ:
3. Կ. Թորոսյան, Ա. Բալայան, Կ. Չիբուխչյան, Մայրենիի դասերի պլանավորումը, «Զանգակ» հրատարակչություն, 2016թ. 120 էջ:
4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ. 192 էջ:
5. Ս. Միսակյան, Ուսումնաեթոդական ձեռնարկ 2-4-րդ դասարանների աշակերտների համար, Երևան 2018թ/
6. Սովորողի ինքնուրույնության և մասնագիտական ինքնորոշման հոգեբանական գնահատում // մեթոդական ուղեցույց, կազմողներ՝ Վ. Ռ. Պապոյան, Ա. Ս. Գալստյան, Դ. Յու. Սարգսյան, Ե. Բ. Մուրադյան // Եր., ԵՊՀ հրատ., 2017, 78 էջ:
7. Վ. Սարգսյան «Ուսումնական հետաքրքրություններ»:
8. Black, P., & William, D. (1998). Assessment and Classroom Learning. Assessment in Education: Principles, Policy, &Practice, 5, 7-74.